

Մ աշտոցի Ա րձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (14-րդ տարի)

Այս թիւով.....

Մայիս Ամսուան Բացատրական
Տօնացոյց Էջ 2-7

Աշխարհամատրան կամ Կանաչ
Կիրակի
Համբարձման Տօնը
Յիսուսի Համբարձումը
Սուրբ Խաչի Երեւման Տօն

Սարդարապատ Էջ 8

1918 Թուականի Մայիսեան
Հերոսամարտը եւ Հայ Եկեղեցին Էջ 9

5-րդ Պատուիրանը Էջ 10

Եզակի գիրեր Էջ 10

Պահուած Բառ Էջ 11

Ո՞րն է Ճիշդ Պատասխանը Էջ 12-15

Ամավերջի Հանդէս Էջ 16

Մայիս 2014 (ԻԱ տարի թիւ 9)



Հ...Համբարձում

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարը

«Հետեւաբար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք:
Զանոնք մկրտեցէք՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց ստրվեցուցէք
այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի, եւ ահա ես ձեզի հետ պիտի ըլլամ,
մինչեւ աշխարհիս վախճանը: *Մատթէոս 28.19-20*»

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Մայիս Ամսուան Բացատրական Տօնացոյց

| | |
|---------|---|
| Կիր. 4 | Կանաչ Կիրակի (Աշխարհամատրան) |
| Կիր. 11 | Կարմիր Կիրակի |
| Կիր. 18 | Տօն Երեւման Սուրբ Խաչին |
| ԴՂ. 28 | Հայաստանի Ա. Հանրապետութեան Տարեդարձ (96-ամեակ) |
| ԵՂ. 29 | Տօն Քրիստոսի Համբարձման |

Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի

Կանաչ Կիրակի անունը կը տրուի Չատկուայ երրորդ Կիրակիին, որ Չատիկէն 14 օր ետք կը հանդիպի եւ Չատկուան հետ 35 օրուան շարժականութիւն ունի:

Աշխարհամատրու բառը կը գործածուի իբր աշխարհաժողով, բազմութեան յատկացեալ եկեղեցի, եւ այս անունը տրուած է Սիոնի Վերնատան, ուր Քրիստոս իր վերջին զատկական ընթրիքը կատարեց եւ Ս. Հաղորդութեան խորհուրդը հաստատեց, եւ ուր առաքեալները սովորութիւն ըրին հաւաքուիլ Քրիստոսի Համբարձումէն ետք: Այս տեղը հաւանաբար Յովհաննէս Մարկոսի տունն էր՝ ուր աղօթքի կը ժողվուէին նոր հաւատացեալները: Հայոց Եկեղեցոյ յատուկ է եկեղեցոյ անունով տօներ կատարել. ասոնց գլխաւորն է Աշխարհամատրանը՝ այսինքն Վերնատան քրիստոնէութեան առաջին եկեղեցին ըլլալուն յիշատակը, որ բոլոր քրիստոնէայ եկեղեցիներուն նախատիպն եղաւ եւ եկեղեցոյ նուիրականութեան նշանակը: Աշխարհամատրան օրը Կանաչ Կիրակի ալ կը կոչուի:

Գիտէի՞ր թէ

1915-ին, Ս. Յարութեան տօնը Ապրիլ 4-ին էր, հետեւաբար Ապրիլ 24, 1915-ը Կարմիր Կիրակին նախորդող Շաբաթ օրն էր:

Համբարձման Տօնը

Համբարձումն եկաւ ծաղկունքը ավան
Զուգել են հանդեր նախշուն գորգերով:
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով:

Յովհաննէս Թումանեանի «Անոյշ»-էն



Ի՞նչ տօն կը նկարագրուի վերի քառեակին մէջ:

«Համբարձում» բառը որպէս արմատ ունի հին հայերէնի՝ գրաբարի «համբառնալ» բայը: Կը նշանակէ վեր բարձրանալ, վեր ելլել:
Խաչելութենէն ետք յարութիւն առնելով՝ Յիսուս Քրիստոս երկրի վրայ մնաց քառասուն օրեր եւս: Այդ ընթացքին, հանդիպելով առաքեալներուն՝ պատուիրեց անոնց երթալ Ձիթենեաց լեռը: Այդ լեռան վրայ Յիսուս օրհնեց զանոնք, պատուիրեց անոնց քարոզել ու տարածել քրիստոնէութիւնը: Այնուհետեւ Ան բարձրացաւ երկինք: Երկրէն երկինք Յիսուսի այս փոխադրութիւնը Նոր Կտակարանին մէջ կը կոչուի «Համբարձում»: Ս, Յարութեան տօնին մէջ «Համբարձումը» 35 օրուայ շարժականութիւն ունի եւ ամէն տարի Ս. Զատիկուան Կիրակիին յաջորդող 40-րդ օրն է, որ միշտ Հինգշաբթի կ'ըլլայ:

Տօնակատարութիւնները

Համբարձման տօնին նախորդող գիշերը ժողովուրդին կողմէ անուանուած է Համբարձման գիշեր: Այդ գիշեր աղջիկները ծաղիկներ կը հաւաքեն եւ եօթ աղբիւրներէ ջուր կը լեցնեն մէկ սափորի մէջ: Հաւաքուած ծաղիկներով փունջ կը կապեն եւ անով կը ծածկեն սափորի բերանը: Գիւղերուն մէջ, սափորը կը դնեն դուրսը, բաց երկնքի տակ, որպէսզի ան ծածկուի համբարձման ձօղով:



Առաւօտեան, աղջիկները տարբեր բանաստեղծական քառեակներ կը գրեն եւ կը դնեն այս սափորին մէջ: Վերջապէս հերթով կը հանեն գրուած երգերը այն հաւատքով, թէ անոնց մէջ ինչ որ գրուած է, կ'իրականանայ: Ահա այդ պատճառով այս երգերը կը կոչուին վիճակի երգեր: Այսինքն, իբրեւ թէ երգերուն մէջ գրուածը վիճակուած ըլլայ զանոնք հանող աղջիկներուն:

Երջանիկ ապագայի յոյսով վիճակ ձգելու այս գեղեցիկ սովորութիւնը ժողովուրդին մէջ յայտնի է «Զան Գյուլում» անունով:

Դե հանի՛ր աղջի
Վիճակն ի բարին
Երգերով գովենք
Էն իգիթ եարին

կամ

Համբարձման Տօնը (շար.)

Եկաւ համբարձում
Ծաղկով զարդարուած
Մեր բաղտին հարցում
Ո՞վ է մեզ գրուած

Աւանդութիւններ

Ըստ ժողովրդական
աւանդութեան՝ Համբարձման գիշերը
բոլոր ծաղիկներն ու բոյսերը կը սկսին
իրար հետ գրուցել եւ ըսել, թէ իրենք
ի՞նչ ցաւ կրնան բուժել, կամ իրենց
արմատներուն մօտ ի՞նչ գանձ կայ
պահուած: Ահա այս պատճառով
մարդիկ այդ գիշեր կը փորձեն հասկնալ
ծաղիկներու լեզուն որպէսզի իմանան
մասին հայոց մեծ բանաստեղծը գրեր է՝



անոնց գաղտնիքները: Համբարձման գիշերուայ

Համբարձման գիշեր, էն դիւթիչ գիշեր
Կայ հրաշալի երջանիկ վարկեան
Բացում են ոսկի երկնքի դռներ,

Ներքե պապանձում, լռում ամէն բան,
Ու Աստուածային անհաս խորհրդով
Լեցում բովանդակ անոր սուրբ գրով:

Յովհաննէս Թումանեան «Անոյշ»-էն



Յիսուսի Համբարձումը

Համբարձում կը նշանակէ «բարձրացում»: Համբարձումը Յիսուսի յարութիւն առած ու փառաւորուած մարմնով երկինք բարձրանալու եւ Հայր Աստուծոյ աջ կողմը նստելու յիշատակումին տօնն է, որ տեղի կ'ունենայ միշտ Հինգշաբթի օր, Յարութեան 40-րդ օրը:

Յարութենէն ետք, Յիսուս իր աշակերտներուն երեւնալէ ետք, 40-րդ օրը իր աշակերտներուն հետ Ձիթենեաց լեռ բարձրացաւ ուր յայտնեց իր աշակերտներուն թէ «երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք ու իմ վկաներս պիտի ըլլաք, Երուսաղէմի, Հրէաստանի, եւ Սամարիայի մէջ մինչեւ աշխարհի ծայրամասերը»: Երբ ան կ'արտասանէր այս խօսքերը, Յիսուս երկինք կը բարձրանայ մինչեւ որ ամպերը ծածկեն զինք աշակերտներուն տեսողութենէն: Այս պատուիրանին համաձայն Թաղէոս ու Բարթողոմէոս Առաքելները Հայաստան կու գան հիմնելու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:



ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԵՐԵՒՄԱՆ ՏՕՆ

Ի յերկնից երեւեալ նշանն յաղթութեան այսօր, հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան (Շարական)

Ամեն տարի Ս. Ջատկին յաջորդող հինգերորդ կիրակի օրը, մեր երանաշնորհ հայրապետներու տնօրինութեան համաձայն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կը յիշատակէ Սուրբ Խաչի երևման տօնը՝ մէկ անգամ ևս յիշելով Տիրոջ չարչարանքները, անոր խաչելութիւնը, և խաչի վրայ անոր թափած անմեղ արեան շնորհիւ մարդկային ցեղի փրկութիւնը: Այս տօնը պատմական դէպքի մը յիշատակութիւնն է:

351 թուի Մայիսի 7-ին, Կիւրեղ Երուսաղեմացի հայրապետի օրով, օրուայ երրորդ ժամուն (ժամը 9-ին) երկնքի վրայ կ'երեւի Փրկիչի խաչի նշանը՝ տարածուելով Գողգոթայէն մինչև Ջիթենեաց լեռը: Այս դէպքին ականատես կ'ըլլան ոչ միայն Երուսաղեմի մէջ բնակող քրիստոնէաները, այլև տարբեր դաւանանքներու ու կրօններու պատկանող մարդիկ: Խաչի պայծառ երևումն նոյնիսկ արեգակը կը մթագնի: Բոլորը կը շտապեն եկեղեցի, իրենց սրտի խորերէն աղօթելու առ Աստուած՝ գոհութիւն յայտնելով Բարձրեային՝ այս մեծ շնորհին արժանացած ըլլալու համար: Երկնային հրաշքի շնորհիւ շատեր կը հաւատան Յիսուսին, կը մկրտուին սուրբ Կիւրեղի ձեռքով՝ անդամագրուելով Քրիստոսի Եկեղեցւոյ: Այս դէպքին առթիւ Կիւրեղ հայրապետ նամակ մը կը գրէ Բիւզանդիայի Կոստանդին կայսրին, որ Մեծն Կոստանդիանոսի որդին էր: Նամակին մէջ սուրբը կը պատմէ Երուսաղեմի խաչի երևման մասին՝ յորդորելով, որ վերջինս հաստատ Թայ իր քրիստոնէական ճշմարիտ հաւատքի մէջ, ինչպէս նաև հաւատարիմ՝ նիկիական դաւանութեան: Այս թուղթը Ե. դարուն կը թարգմանուի հայերէնի և կ'ընթերցուի տօնի օրուայ առաւօտեան ժամերգութեան աւարտին՝ կատարուող անդաստանէն առաջ:

Մեր բազմադարեան պատմութեան մէջ ալ քիչ չեն խաչի երևումները: Երանելի Կորիւնը, ինչպէս նաև քերթողահայր Մովսէս Խորենացին, Հայ Եկեղեցւոյ երբամեծ վարդապետ Մեսրոպ Մաշտոցի մահուան և թաղման կապակցութեամբ արձանագրած են, որ Վաղարշապատ քաղաքին մէջ օրեր շարունակ խաչի լուսապայծառ նշանը փայլեր է այն տան վրայ, ուր սուրբն աւանդեր էր իր հոգին: Այդ նոյն նշանն ալ առաջնորդ է եղեր բազմութեան՝ ամբողջ յուղարկաւորութեան ընթացքին: Եւ այսքան տարիներ յետոյ, շատերու մօտ հարց կրնայ ծագիլ թէ ի՞նչ է խաչը քրիստոնէաներու համար, և ի՞նչ է անոր նշանակութիւնը:

Խաչը Հռոմէական կայսրութեան ժամանակ մահապարտները անարգելու և նախատելու համար էր: Խաչելութիւնը ոչ միայն անպատուաբեր վախճան կը համարուէր, այլև հին աշխարհի յայտնագործած ամենաանմարդկային և դաժան պատիժներէն մէկն էր: Դատապարտեալը մերկ կը գամէին խաչին՝ ենթարկելով զանազան մարմնական խոշտանգումներու: Եւ խաչեալը կը տանջուէր, արևի կիզիչ ճառագայթները կ'այրէին անոր գլուխը, անբնական վիճակէն մարմինը կ'ուռճէր, վերքերը կը բորբոքէին անտանելի ցաւեր պատճառելով: Մահապարտը, երկար տանջուելէ յետոյ, կ'աւանդէր հոգին: Այդ ժամանակ տախտակներէ շինուած այդ գործիքը մահուան խորհրդանիշն էր: Հին Կտակարանին մէջ կը կարդանք. «Անիծեալ է ան, որ փայտէ կը կախուի» (Բ Օր. ԻՄ 23), բայց մեր Տէրն ու Փրկիչ Յիսուս Քրիստոս խաչի վրայ հեղած իր թանկագին արեամբ կենաց և օրհնութեան միջոցի վերածեց զայն «այդ անէծքէն մեզ ազատեց, ինք մեր տեղը անէծքի առարկայ դառնալով» (Գաղ. Գ 13): Աստուածորդին միացաւ խաչափայտին սրբագործելով զայն և մեզ տալով «զէնն յաղթութեան» ընդդէմ սատանայի ու անոր խաբկանքներուն: Եթէ

մինչև Քրիստոս խաչն անարգանքի և նախատինքի նշանն էր, ապա Տիրոջ խաչելութեամբ անոր մեջ դրուեցաւ կեանքի խորհուրդը, և մարդ արարածը հնարաւորութիւն ստացաւ նոր արարած ըլլալու. «Ուեւ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապէս» (Բ Կորնթ. Ե 17): Քրիստոս խաչի վրայ ներեց մեզի, մեր մեղքերու պարտամուրհակը վերցուց մեջտեղէն՝ գամելով զայն խաչափայտին:

Մարդկութեան փրկութեան համար մարմնացած Աստուած խաչուեցաւ, թաղուեցաւ, բայց երրորդ օրը հրաշափառապէս յարութիւն առաւ մեռելներէն՝ քանդելով մահուան կապանքները: Այո՛, յարութիւն առաւ Տէրը, որովհետև Լոյսը չէր կրնար գերեզմանի մթութեան մեջ մնալ: Եւ այս իրողութիւնը նկատի ունենալով է որ սուրբ Կիրիլոս Երուսաղէմացին կ'ըսէ. «Կը դաւանիմ Խաչը, քանզի գիտեմ Յարութիւնը»:

Հետևաբար խաչը մեզ համար յոյսի, սիրոյ, յաղթանակի և փրկութեան նշանն է, որուն վրայ Աստուածորդին պարտութեան մատնեց սատանային՝ մեր առաջ բանալով դրախտի դուռը, որը մինչ այդ փակուած էր մեր նախածնողներ Ադամի ու Եւայի անհնազանդութեան պատճառով: Յիսուս խաչին վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրն ու անբաւ ողորմածութիւնը ադամորդիներուս նկատմամբ: Տէրն իր փրկագործութեան խորհուրդով խաչը վերածեց յաղթութեան նշանի: Եւ այս գիտակցութեամբ ու խոր համոզումով է որ քրիստոնէութեան մունետիկ Պօղոս Առաքեալ ի լուր բոլորին կ'ազդարարէ. «Քա՛ւ լիցի, որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ» (Գաղ. Զ 14): Այո՛, տէրունական նշանը ճշմարիտ քրիստոնէաներուս համար պարծանքներու պարծանքն ու Աստուծոյ անսահման սիրոյ արտայայտութիւնն է անկեալ մարդու նկատմամբ: Ճիշդ է, անհաւատ ու Տէրը չճաշակած մարդոց համար խաչի վրայ Քրիստոսի այս զոհողութիւնն անիմաստ և անհասկանալի կը թուի, բայց մեզի համար, որ մեր սրտերուն մեջ ընդունել ենք ճշմարիտ Աստուած՝ Յիսուս Քրիստոսը, խաչը դարձեր է փրկութեան գրաւականը: Անգիտութեան խաւարին մեջ խարխափող այս մարդոց մասին է առաքեալի խօսքը. «Որովհետեւ, ինչպէս յաճախ կ'ըսէի եւ հիմա եւս լալով կ'ըսեմ, մեր մեջ կան շատեր՝ որոնց կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց վերջը կորուստ է, որովհետեւ իրենց Աստուածը իրենց փորն է: Ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորհին» (Փիլիպ. Գ 18-19):

Ապաւինելով խաչի զօրութեանը՝ մենք կը խափանենք շարը, խաչակնքելով, մենք մեզի Աստուծով կը զօրացնենք, եւ անով կը զարդարենք մեր հոյակերտ եկեղեցիները, անով կը կնքենք մեր զաւակները, անով կը պսակուինք, անով ալ գերեզման կ'իջնենք յաւիտենական կեանքի յոյսով: Ինչպէս Տիրոջ երկրային կեանքը խաչի ճանապարհ մը եղաւ, այնպէս ալ քրիստոնէաներուս համար այս ժամանակաւոր կեանքը խաչի ճանապարհ է: Ճանապարհ մը, որ անձուկ ու դժուար է, քարքարոտ ու փշոտ, բայց որու վերջնական հանգրուանը Տիրոջ խոստացած երկնային արքայութիւնն է: Սուրբ խաչի երևման տօնէն բխող պատգամն է, որ խաչակնքումը մեզի համար ոչ թէ ձևական ու մեքենական շարժում մըն է, այլ ամէն անգամ երբ կը խաչակնքենք պահ մը կ'անդրադառնանք այն մեծ ինքնագոհութեան, որ Աստուած իրականացուց խաչին վրայ մեր փրկութեան համար: Մեր աղօթքը կը վերառաքենք առ ամենաբարին Աստուած՝ կրկնելով սուրբ հայրերու շուրթերուն բիւրեղացած սրտառույ մատաղանքը.

Խաչ քո եղիցի մեզ ապաւեն, Տէր Յիսուս,
յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս:
Յայնժամ մեք մի ամաչեսցուք
յուսացեալքս ի քեզ, այլ զօրութեամբ քով
մեծաւ բերկրեսցուք ընդ աջմէ քումմէ
որպէս զորդիս լուսոյ և որդիս տուրնջեան:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ



Գիտե՛ի՞ր թե՛

. Հայաստանի Հանրապետության Զինանշանին կեդրոնը Արարատ լեռն է որուն վրայ կը հանգչի Նոյեան Տապանը:

. Հայերենը Հայաստանի պաշտօնական լեզու հռչակուեցաւ Դեկտեմբեր 1919-ին:

. 1918-1920 Անկախ Հայաստանի վերջին դաշնագիրը՝ Սերի Դաշնագիրը ստորագրուեցաւ 10 Օգոստոս 1920-ին:

1918 թուականի Մայիսեան Հերոսամարտը եւ Հայ Եկեղեցին

1918 թուականի սկիզբներուն, թրքական բանակը, արեւմտեան Հայաստանի հայերը ցեղասպանութեան ենթարկելէ վերջ, իր յառաջխաղացքը շարունակեց ձգտելով գրաւել նաեւ արեւելեան Հայաստանը: Այս սպառնալիքին դէմ կեցաւ հայ հասարակութիւնը իր ամբողջութեամբ, ներառեալ Հայաստանեայց եկեղեցին, որուն մասնակցութիւնը մայիսեան հերոսամարտին արժանի է յիշատակման: Նկատի ունենալով թուրքերու դէպի արարատեան դաշտ շարժումը, հայկական զօրքերու հրամանատարութիւնը դիմեց օրուան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեանցին, առաջարկելով անոր Էջմիածնին յապառնացող վտանգին առջեւ կաթողիկոսական մայր աթոռը տեղափոխել աւելի ապահով տեղ՝ Բիւրական:

Ահա թէ ինչ էր կաթողիկոսին կոչը իր ժողովուրդին, առ ի պատասխան փախուստի այդ առաջարկին. «Ազգ հայոց, թուրքը մեր բանական հօտի դարաւոր թշնամին, նուաճել է Ալեքսանդրապոլը, շարժում է դէպի սիրտը մեր երկրի, մեր հաւատի, մեր կենսագրութեան: Գալիս է Արարատեան երկրի վրայ: Թուրքը, կոտորած ու աւեր սփռելով, գալիս է եւ մեր զօրապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան Հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք Ամենայն Հայոց կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը, մեր սրբարանները, հայ ժողովուրդը, հայրենի երկրի վերջին կտորը: Առաջարկում են լքել այս բոլորը եւ սեփական կեանքը փրկել Բիւրականում կամ այլ անմատչելի լեռնածերպի վրայ: Ո՛չ եւ ոչ, հազար անգամ ոչ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից աւանդուած մայր աթոռը: Ես չեմ հեռանայ Հայոց առաքելական եկեղեցու օճախից: Եթէ հայոց զինուորութիւնն ու ինքը՝ հայ ժողովուրդը չեն կարողանայ թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթէ ի զօրու չեն լինի մեր սրբութիւնները, ապա թող եւ նահատակուեմ հենց այստեղ շեմի վրայ Մայր աթոռի, որու գահակալի պատիւն ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխօսութեամբ եւ Աստուծոյ ողորմածութեամբ: Միթէ մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օճախի կրակը, մեր հաւատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը: Իսկ եթէ եկել է վերջը, ապա այն ինչն՝ ի չընդունենք պատուով ու քաջութեամբ եւ ոչ թէ ողորմելի զեռունի պէս ոսոխի առաջ սողալով: Մեր պատմութեան անցեալ դարերը լիքն են քաջութեան օրինակներով, ներկուած են նահատակների արեամբ: Դրանով չի սպառուել մեր արիւնը եւ չի կորսուել քաջութիւնը մեր շարքերից: Դարեր շարունակ հայոց ազգն այսպէս է ապրել՝ իր ինքնութեան համար պայքարելով, իր վաղուայ համար այսօր մեռնելով: Եւ որովհետեւ, ով գաղափարի՝ հետ է մեռնում, մեռնում է որպէս հատիկի ցորենի, ապա հատիկի մահով նոր կեանքեր են ծնուում վաղ թէ անագան: Դրա համար է, որ զանգուածային կոտորածներով ու մահերով հարուստ մեր կենսագրութիւնը չի ունեցել եւ երբեք էլ չպիտի ունենայ վերջին վերջակէտ: Ուրեմն էլ ինչն՝ ու դաւենք ապրելու եւ գոյատեւելու մեր ազգային կերպին: Ինչն՝ ազգովին չբարձրանանք թշնամու դէմ, որ գալիս է անդրարաքսեան իր թեթեւ յաջողութիւններով յղիացած եւ մեր արեան վերջին կաթիլին ծարալի...»:

Եւ վեհարանի դահլիճին ու Մայր աթոռի բակին մէջ հաւաքուած ամբողջ բազմութիւնը կերպարանափոխուած միահամուռ բացագանչեց.

- Պատրաստ ենք ելնելու, Վեհափառ Տէր:

Ապա ծերունագարդ հայրապետը, իր արծուային հայեացքն ուղղելով ժողովուրդին շարունակեց.

- Ես միշտ էլ հաւատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնութիւնները: Ես համոզուած եմ նաեւ, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խօսքը: Եւ խօսքն այդ պիտի լինի յաղթական:

Կաթողիկոսին խօսքը բազմացուեցաւ տպարանին մէջ եւ ուղարկուեցաւ ռազմաճակատ...

5-րդ պատուիրանը

Պատուէ՛ հայրդ ու մայրդ, որպէսզի կեանքդ երկար ըլլայ այն երկրին վրայ, որ ես՝ Տէրը, քու Աստուածդ, քեզի կուտամ:

Մեր բոլոր բանաստեղծները ամենէն քնքոյշ եւ սրտաթով բառերը վերապահած են մայրերուն: Մայրութիւնը այնքան նուիրական արժէք մը եղաւ հայ ժողովուրդին համար որ մայր բառը դարձաւ բնորոշիչ բառը հայոց ամենէն նուիրական սրբութիւններուն.

- Մայր Եկեղեցի, Մայր Աթոռ, Մայր Տաճար
- Մայր Հայաստան, Մայր հայրենիք, Մայրաքաղաք
- Մայրենի լեզու
- Մայր Արաքս

Դուք ձեր կեանքով, նուիրումով, գոհողութեան գերազանց արտայայտութեամբ ամենէն մեծ դաստիարակներն էք հայ ժողովուրդի զաւակներուն: Ձեր դասագիրքը Ձեր սէրն է, ձեր գրիչը՝ ձեր ժպիտը...

Արեգակի լոյսին պէս թող այդ ժպիտը միշտ ծագի հայ մանուկներու աչքերուն մէջ, երբ անոնց աչքերը բացուին աշխարհի լոյսին:

Գարեգին Բ. Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ

Եզակի գիրեր (Հայերէն գիրերով Sudoku)

| | | | | | | | | |
|---|---|--|---|---|---|--|---|---|
| ը | | | | | | | | զ |
| | | | զ | է | թ | | | |
| թ | զ | | ա | | ը | | է | է |
| զ | դ | | է | | զ | | թ | բ |
| | է | | | | | | դ | |
| զ | թ | | բ | | է | | է | զ |
| է | զ | | ը | | է | | զ | դ |
| | | | դ | է | զ | | | |
| ա | | | | | | | | է |

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, է, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր, իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

Պատկերաբան


| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| կ | ի | ր | ա | կ | ն | օ | ր | ե | ա | յ |
| ք | ա | ր | շ | ր | տ | ա | ր | ր | վ | ա |
| կ | ա | ռ | ա | պ | ա | ն | ե | ե | ա | ւ |
| ա | ե | ր | կ | պ | վ | ա | ն | ա | ր | ի |
| լ | ա | ր | ե | ե | ա | ր | ւ | ւ | ժ | տ |
| ա | ւ | ա | ր | ն | ի | ս | ռ | մ | ա | ե |
| ն | ա | ր | տ | տ | խ | ռ | տ | ջ | ր | ա |
| ա | ւ | ք | խ | տ | տ | ա | ւ | ա | ա | ն |
| ւ | ռ | ռ | ռ | խ | ր | ե | ւ | ռ | ն | ա |
| ռ | ւ | ր | ւ | ռ | տ | կ | ա | յ | տ | տ |
| ր | ր | ռ | լ | ա | լ | կ | ա | ն | ե | ա |
| հ | ա | ն | ա | պ | ա | զ | ռ | ր | ս | ս |

այտ
անարի
աշակերտ
ապաստան
աուր
աւար
արար
լալկան
խաւ
խուլ
կիրակնօրեայ

կալանաւոր
կշռել
կտուր
մոսին
նարտ
նուէր
նորոք
ուռի
ուխտ
ուր
կառապան

հանապազոր
յաւիտեան
սա
սխտոր
սատանա(յ)
վարժարան
տէր
տունէր
տխուր
քարշ
կալանաւոր

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Ըստ Ղուկաս 24.50-53ի
օրհնեց, երկինք, երկրպագեցին, զԱստուած, Բեթանիա,
բաժնուեցաւ, Երուսաղէմ
Յիսուսի համբարձումը այս տարի Մայիս -- ին է:

Ապա տարաւ զանոնք մինչեւ ----- եւ ձեռքերը
վեր բարձրացնելով ----- զանոնք: Եւ մինչ
կ'օրհնէր, ----- անոնցմէ, դէպի -----
բարձրանալով: Անոնք ----- Յիսուսի եւ մեծ
ուրախութեամբ վերադարձան -----: Ամէն օր
տաճարին մէջ էին՝ գովելով ու օրհնաբանելով -----
-----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Այս տարի ե՞րբ կը տօնենք

Մայրերու օրը:

ա. Մայիս 10

բ. Մայիս 11

գ. Մայիս 12

դ. Մայիս 13

2.- Ասոնցմէ ո՞ր մէկը սխալ է:

ա. Նոր Կիրակի

բ. Սրճագոյն Կիրակի

գ. Կարմիր Կիրակի

դ. Կանաչ Կիրակի

3.- Հետեւեալներէն ո՞ր մէկուն

պատկերը Հայաստանի

Հանրապետութեան Զինանշանին

վրայ կը գտնենք (երկու

պատասխան):

ա. Արարատ լեռը

բ. Նոյեան Տապանը

գ. 10 Պատուիրանները

դ. Յիսուսի Համբարձումը

4.- Սուրբ Խաչին երեւումը ո՞ր տեղի ունեցաւ:

ա. Երուսաղէմէն մինչեւ Երիքով

բ. Երիքովէն մինչեւ Երուսաղէմ

գ. Գողգոթայէն մինչեւ Ձիթենեաց լեռ

դ. Փոքր Մասիսէն մինչեւ Մեծ

Մասիս

5.- Համբարձումը շաբթուան ո՞ր օրը կը տօնենք:

ա. Երկուշաբթի

բ. Երեքշաբթի

գ. Չորեքշաբթի

դ. Հինգշաբթի

6.- Պատարագի ընթացքին ո՞վ

(որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս

ի մէջ մեր յայտնեցաւ...»:

ա. Պատարագիչը

բ. Սարկաւազը

գ. Քահանան

դ. Դպիրները

7.- Ողջոյն տուողը ի՞նչ կ'ըսէ:

Քրիստոս - մէջ --- յայտնեցաւ

8.- Ողջոյն ստացողը ի՞նչ կ'ըսէ:

----- է ----- Քրիստոսի

9.- Այս տարի Հայաստանի Ա.

հանրապետութեան քանիերո՞րդ

տարեդարձն է:

ա. 96

բ. 95

գ. 94

դ. 93

10.- Ո՞ր ստորագրուեցաւ

Հայաստանի Ա. հանրապետութեան

վերջին դաշնագիրը 10 Օգոստոս

1920-ին:

ա. Սեւր

բ. Լոզան

գ. Պերլին

դ. Փարիզ

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞րն է Կիրակիներուն ճիշդ

շարքը:

ա. Կրկնագատիկ, Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի

բ. Կանաչ Կիրակի, Նոր Կիրակի, Կարմիր Կիրակի

գ. Նոր Կիրակի, Կարմիր Կիրակի, Կանաչ Կիրակի

դ. Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի, Կրկնագատիկ

2.- Աշխարհամատրան Կիրակին կը կոչուի նաեւ.

ա. Կանաչ Կիրակի

բ. Կարմիր Կիրակի

գ. Կրկնագատիկ

դ. Նոր Կիրակի

3.- Յիսուս իր յարութենէն քանի՞ օր ետք Համբարձաւ:

ա. Հինգ

բ. Յիսուն

գ. Քառասուն

դ. Երեք

4.- Յիսուսի Համբարձումը շաբթուան n-ր օրը կը տօնենք.

ա. Երկուշաբթի

բ. Հինգշաբթի

գ. Շաբաթ

դ. Կիրակի

5.- Այս տարի Հայաստանի առաջին հանրապետութեան հռչակման քանի՞ երորդ տարեդարձն է:

--

6.- Յովհաննէս Թումանեան իր n-ր գործին մէջ Համբարձումի աւանդութիւնները կը նկարագրէ:

ա.- Շունն ու Կատուն

բ.- Անոյշ

գ.- Սուտիկ Որսկանը

դ.- Գիգոր

7.- Հին Կտակարանի n-ր դէպքը նշուած է Հայաստանի հանրապետութեան զինանշանին վրայ:

ա. Տասնաբանեան

բ. Նոյի Տապանը

գ. Աշխարհի ստեղծագործութիւնը

դ. Բաբելոնի Աշտարակը

8.- Ամբողջացո՞ւր 5-րդ պատուիրանը:

Պ----- Հ----- ու -----, որպէսզի կեանքդ ----- ըլլայ այն երկրին վրայ որ ես Տէրը, քու Աստուածդ, քեզի --- ---:

9.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Քրիստոսի համբարձումը.

Մայիս -- ին:

10. Ո՞վ էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայիս 1918-ին:

----- Ե. Սուրենեանց

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ե՞րբ ստորագրուեցաւ Սեւրի
Դաշնագիրը:

Օ-----, 19--

2.- Ո՞րն է հետեւեալ Կիրակիներուն
շիտակ շարքը.

ա. Երկրորդ Ծաղկազարդ,
Հոգեգալուստ, Համբարձում, Տօն
Երեւման Ս. Խաչի:

բ. Երկրորդ Ծաղկազարդ, Տօն
Երեւման Ս. Խաչի, Հոգեգալուստ,
Համբարձում:

գ. Համբարձում, Երկրորդ
Ծաղկազարդ, Հոգեգալուստ, Տօն
Երեւման Ս. Խաչի:

դ. Տօն Երեւման Ս. Խաչի,
Համբարձում, Երկրորդ Ծաղկազարդ,
Հոգեգալուստ:

3.- Հայերէնը ե՞րբ Հայաստանի
Հանրապետութեան պաշտօնական
լեզու հռչակուեցաւ:

ա. Դեկտեմբեր 1917

բ. Դեկտեմբեր 1919

գ. Մայիս 1918

դ. Փետրուար 1921

4.- Ամբողջացո՞ւր.

ա. Մայր -----

բ. Մայր-----

գ. Մայր-----

դ. Մայր-----:

5.- Հետեւեալներէն ո՞վ կրնայ
ձեռնադրութիւն կատարել.

ա. Սարկաւազը

բ. Եպիսկոպոսը

գ. Ծայրագոյն վարդապետը

դ. Աւագ Քահանան:

6.- Որո՞նք են Քրիստոսի
Եկեղեցոյ սկզբնական շրջանի
նուիրապետական 3 աստիճանները:

ա. Ս.....

բ. Ե..... կամ Ք.....

գ. Ե.....

7.- Ըսէ՛ մէկ բառով «Աստուծոյ ծառայ
ել եկեղեցոյ սպասաւոր».

Կ----- կամ Ժ-----:

8.- Ըսէ՛ մէկ բառով
«Դռնապանութիւն, Ընթերցողութիւն,
Երդմսեցուցչութիւն կամ
Ջահընկալութիւն ընող».

.....:

9.- Ըսէ՛ մէկ բառով «Ս. Պատարագի
ընթացքին նշխարները Ս. խորան
փոխադրել».

Վ.....:

10.- Ի՞նչ նուիրապետական կարգ
կ'ունենայ Ս. Եկեղեցոյ գլխաւոր
սպասաւորը.

.....:

Հայաստանեայց Եկեղեցւոյ

Մուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոց
2013-2014 Տարեշրջանի (34-րդ)

Ամսալերջի Հանդէս՝

Կիրակի 8 Յունիս, 2014

Ժամը 13:30-ին

Բաստրմաճեան Սրահ

(մուտքը ազատ)

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել տնօրէն՝ Թորոս Պապիկեանին

Հեռ. (514)-956-1277 email director@sourphagop.org

Կայքէջ՝

www.sourphagop.org

14-րդ տարի

Ամսաթերթ՝

«Մաշտոցի Արձագանգ»

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

21-րդ տարի